Հաստատում եմ

Տնօրեն՝ ________

Լ.Սարուխանյան

31.08.2022թ

«ՀՀ Լոռու մարզի

Վանաձորի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան

թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

# ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

# ՊԼԱՆ

## 2022 – 2023 ուստարի

*Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով*

*տնօրենի տեղակալ՝ Սվետլանա Սամվելի Դալլաքյան*

**2022 – 2023 ուստարվա ուսումնադաստիարակչական**

**աշխատանքների տարեկան պլան**

| | Աշխատանքների բովանդակություն | ժամկետ | պատ. անձ. | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Գլուխ 1<br><br>**<u>I նիստ</u>** | | | |
| 1 | Աշնանային վերաքննությունների և ամառային առաջադրանքների արդյունքները/առկայության դեպքում/: | Օգոստոս 2022թ. | փոխտնօրեն | |
| 2 | 2021-2022 ուստարվա արդյունքների ամփոփում և 2022-2023 ուստարվա խնդիրների և անելիքների քննարկում: | Սեպտեմբեր 2022թ. | փոխտնօրեն | |
| | **<u>II նիստ</u>**<br><br>Հումանիտար առարկաների դասավանդման դրվածքը 5-րդ,6-րդ, մայրենի, հայոց պատմություն, ռուսաց լեզու առարկաներից: | նոյեմբեր 2022թ. | փոխտնօրեն մ/մ նախագահ | |
| | 2022-2023 ուստարվա I կիսամյակի արդյունքները և II կիսամյակի խնդիրները: | | | |
| | **<u>III նիստ</u>**<br>Բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդման դրվածքը VllI և IX դասարաններում աշխարհագրություն,, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաներից: | Դեկտեմբեր 2022թ. | փոխտնօրեն մ/մ նախագահ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Դպրոցի տնօրենության կողմից տրված ստուգողական գրավոր աշխատանքների / հայոց լեզու, մաթեմատիկա / արդյունքների մասին:<br><br>**<u>IV նիստ</u>**<br>2022-2023 ուստարվա 9-րդ դասարանում օտար լեզու և բնագիտություն առարկաներից ընտրովի քննությունների մասին:<br><br>2022-2023 ուստարում դասերից 120-200 ժամ բացակայած աշակերտների համար ուսպլանով նախատեսված առնվազն 5 առարկայից քննություններ հանձնելու մասին (առկայության դեպքում):<br><br>**<u>V նիստ</u>**<br>2022-2023 ուստարվա IX դասարանի աշակերտներին քննություններից հետո ազատելու և հիմնական կրթության վկայականներ հանձնելու մասին:<br><br>**<u>VI նիստ</u>**<br>4-րդ և 9-րդ դասարանի շրջանա-վարտների գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների արդյունքների մասին: | դեկտեմբեր, մարտ 2022-2023թթ<br><br>փետրվար 2023թ.<br><br>մայիս 2023թ.<br><br>հունիս 2023թ.<br><br>հունիս 2023թ. | փոխտնօրեն<br><br>տնօրեն փոխտնօրեն<br><br>փոխտնօրեն<br><br>տնօրեն փոխտնօրեն<br><br>տնօրեն փոխտնօրեն | |

| Գլուխ II<br>ՀՀ կրթության և գիտության բարեփոխումների ծրագրին<br>համապատասխան դպրոցի միջոցառումների պլան | | | | |
|---|---|---|---|---|
| | Մինչև 29.08.2022թ. հրավիրել նախորդ ուստարվա առարկայա-կան մեթոդմիավորումների նախագահներին և տնօրենի հաստատմամբ նրանց հետ վերջնական տեսքի բերել 2022-2023թ. ուստարվա դասաբաշ-խ.ումը՝ հաշվի առնելով դպրոցում հինգօրյա ուսում-նական շաբաթով աշխատելու հանգամանքը»: | Օգոստոս 2022 թ. | Փոխտնօրեն | |
| | Հանձնարարել բոլոր մեթոդմիա-վորումների նախագահներին մինչև 31.08.2022թ. հրավիրել առարկայական մասնախմբերի I նիստերը: Հաստատել տարեկան աշխատանքային պլանները, նոր դասագրքերի և ծրագրերի համապատասխան թեմատիկ պլանները, իրենց կարծիքները ներկայացնել 2022-2023թ. ուստարվա երաշխավորված հիմնական դասագրքերի մա-սին, դժվար ըմբռնելի թեմաների շուրջը կազմակերպել քննարկումներ :<br><br>Օգոստոսյան կոնֆերանսի հարցերի ներկայացում:<br><br>2022-2023 ուստարում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու նպատակով ձևավորել ներքոհիշյալ առարկայական մեթոդմիավո-րումները ՝<br>1. Հումանիտար<br>2. Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի | Օգոստոս սեպտեմբեր 2022թ.<br><br>Օգոստոս սեպտեմբեր 2022թ. | Փոխտնօրեն<br><br>Փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 3. Տարրական<br>4. Բնագիտական<br>5. Օտար լեզուների<br>6. Համակցված առարկաների<br><br>Հրավիրել արդեն հրամանագրված առարկայական մասնախմբերի նախագահների խորհրդակցություն և հրահանգավորել, օգնել տարեկան աշխատանքային պլանները կազմելու հարցում (ինչ հարցեր դնել, որոնք բխեն 2022-2023 ուստարվա դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից և դպրոցի բարեփոխում ների ծրագրից):<br><br>Հանձնարարել առարկայական մասնախմբերի նախագահներին,<br>ա/ ստեղծել առաջավոր փորձի ամբիոններ<br>բ/ երիտասարդ և սկսնակ ուսուցիչներին օգնելու և ստաժավորման ուղղությամբ միջոցառումների պլանի համապատասխան ստեղծել համեմատաբար հարուստ փորձ ունեցող և ատեստավորված ուսուցիչների ցուցակ, որոնք ուստարվա ընթացքում համապատասխան օգնություն կցուցաբերեն իրենց կցված սկսնակ ուսուցիչներին:<br><br>Ամառային առաջադրանք ստացած աշակերտների հետ աշխատանք կազմակերպելու նպատակով կազմել պարապմունքների ցուցակ -գրաֆիկ և հետևել, որ ուսուցիչները երեխաների հետ | սեպտեմբեր 2022թ.<br><br>Սեպտեմբեր 2022թ. | Փոխտնօրեն առարկայական մասնախմբերի նախագահներ<br><br>Փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշխատանքը կազմակերպեն արդյունավետ: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **ա**/ 2022-2023 ուստարվա ուսումնա-դաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի համաձայն, կազմա-կերպել և անցկացնել օրինակելի և փորձի փոխանակման բաց դասեր, յուրաքանչյուր մեթոդմիավորումում լսել 3-4 ուսուցչի առարկայական–մաս-նագիտական զեկուցումներ, անցկացնել ռուսաց լեզվի տարրական դասարանների, հայոց լեզվի և գրակա-նության, մաթեմատիկայի, անգլերեն լեզվի, պատմության աշխարհագրու-թյան, ֆիզիկայի, քիմիայի,օտար լեզուների առարկայական շաբաթներ: | Ուստարվա ընթացք | Փոխտնօրեն | |
| | **բ**/ Կիսամյակը մեկ անգամ /օր.՝ կի-սամյակի վերջին 3 շաբաթվա ընթաց-քում/ տնօրենության կողմից կազմակերպել ստուգողական գրավոր աշխատանքներ Հայոց լեզվից, մաթեմատիկայից և տարրական ,և միջին դասարաններում արդյունքները զեկուցել մանկավարժական խորհրդի նիստում: | Ուստարվա ընթացք | Փոխտնօրեն | |
| | **գ/** Յուրաքանչյուր մեթոդմիավորման նիստում քննարկել «Կրթություն» թերթում տպագրված այն հոդ-վածները, որոնք կապված են 20212-2023 ուստարվա բարեփոխումների ծրագրերի հետ, առաջավոր փորձերը մասսայականացնել, արձագանքել հա-մապատասխան հոդվածներին: | Ուստարվա ընթացք | Փոխտնօրեն | |
| | **դ/**Կազմակերպել փոխադարձ դասալսումներ, քննարկել նիստերում: **ե/** Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից 2 շաբաթ առաջ ստուգել ծրագրային նյութերը, չկատարման դեպքում հնարավորություն ստեղծել պակասը լրացնելու: | Ուստարվա ընթացք | փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Մանկավարժական խորհրդի նիստերում նախատեսված առարկաների դասավանդման դրվածքը ավագ դասարաններում ուսումնասիրելու նպատակով անցկացնել օրինակելի և փորձի փոխանակման բաց դասեր, կազմակերպել փոխադարձ դասալսումներ, անցկացնել առարկայական շաբաթներ և մասնագիտական զեկուցումներ՝ առարկայական մասնախմբերում լսելու և քննարկելու նպատակով : | ուստարվա ընթացք | մեթոդմիավորումների նախագահներ | |
| | **Առաջնորդվելով** 2022-2023 ուստարվա ուսումնական պլանով և դրանց պարզաբանումներով, ինչպես նաև դպրոցական պարտադիր ժամաքանակների բաշխումը մանկավարժական խորհրդի որոշմամբ և մասնախմբերի ներկայացմամբ հստակեցնելուց հետո օրինակելի ուսումնական պլանը տեղայնացնել և հաստատել մանկավարժական խորհրդի օգոստոսյան նիստում: | ուստարվա ընթացք | Առարկայական մասնախմբերի նախագահներ<br>Փոխտնօրեն | |
| | **Առաջնորդվելով** 2022-2023 ուստարվա ուսումնական պլանով 8-9-րդ դասարաններում «ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից հունվար-փետրվար ամիսներին 14 դասաժամ հատկացնել «Առողջ ապրելակերպ» առարկային և էլեկրոնային մատյանում գրառումների համար հատկացնել առանձին էջ : | | | |
| | **Ձեռք բերել** համապատասխան դիդակտիկ պարագաներ, լաբորատոր սարքավորումներ և այլ նյութեր: | ուստարվա ընթացք | Փոխտնօրեն առարկայական մասնախմբերի նախագահներ | |
| | Կազմել ինքնակրթության համապատասխան պլաններ: Դրանցով առաջնորդվել մեթոդամանկավարժական գրականությունից օգտվելիս: Օրինակելի փորձի փոխանակման դասեր կազմակերպել, առարկայական ամբիոններում դրանք վերլուծել և քննարկել, ԿԳՄՍՆ կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին գրաֆիկից դուրս մասնակցելու նպատակով տվյալ ուստարում համապատասխան առարկաների ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման: | ուստարվա ընթացք<br>Պարբերաբար | | |
| | **Ակտիվ մասնակցություն ցուցաբերել** դպրոցականների համադպրոցական, համաքաղաքային, հանրապետական օլիմպիադաներին և սպորտային միջոցառումներին, խթանել, որպեսզի դրանք անցկացվեն ժամանակին և բովանդակալից : | ուստարվա ընթացք | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | **Գլուխ III**<br>Կազմակերպման խնդիրներ<br><br>**ա/** ըստ օրինակելի պլանի տեղայնացված ուսպլանի կազմում,<br>**բ/**առարկայական մասնախմբերում կատարված դասաբաշխման հիման վրա դասացուցակի կազմում :<br><br>Ուսուցիչների թեմատիկ պլանների ստուգում,թերությունների վերաց-ման վերաբերյալ առաջարկություն-ներ, տնօրենի հաստատումը:<br><br>Յուրաքանչյուր ամիս կատարել էլեկտրոնային մատյանների ստուգում,համա-պատասխան դիտողությունների գրառում, թերությունների վերացման վերաբերյալ առաջարկություններ:<br><br>Առարկայական մասնախմբերի նիստերի ժամանակ «Կրթություն» Շաբաթաթերթում, ԿԶՆԱԿ-ի բլոգում , ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ստացված նորություննե-րին ծանոթացում:<br>Կատարել Դասալսումներ, դրանց վերաբերյալ քննարկումներ,առավել ուշադրութ-յուն դարձնել առարկայական դըր-վածքին , առարկայական ամիսնե-րին ու շաբաթների:<br><br>Առաջին կիսամյակի ամփոփում<br><br>Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպում, անցկացում: | ուստարվա ընթացքում<br><br>յուրաքանչյուր ամիս<br><br>ուստարվա ընթացք<br><br>ուստարվա ընթացք<br><br>ուստարվա ընթացք<br><br>դեկտեմբեր 2022 թ.<br><br>ուստարվա ընթացք | Փոխտնօրեն<br><br>Փոխտնօրեն<br><br>Փոխտնօրեն<br><br>Փոխտնօրեն<br><br>Փոխտնօրեն առարկայական մասնախմբերի նախագահ<br><br>Փոխտնօրեն<br><br>Փոխտնօրեն առարկայական մասնախմբերի նախագահ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Երկրորդ կիսամյակի և տարեկանի ամփոփում: | Մայիս, 2023թ. | Փոխտնօրեն | |
| | Գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների կազմակերպում և անցկացում IV և IX դասարաններում : | ուստարվա ընթացք | | |
| | Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից 2 շաբաթ առաջ ստուգել ուսուցիչների թեմատիկ պլանների կատարողականը , տալ համապատասխան ցուցումներ թերությունների վերացման վերբերյալ : | ուստարվա ընթացք | Փոխտնօրեն | |
| | Կազմակերպել ուսումնական պարապմունքների պարբերական վերահսկողություն: | ուստարվա ընթացք | Փոխտնօրեն | |
| | • Պարբերաբար անցկացնել մմ նախագահների խորհրդակցություն:<br>• «ՍՄԱՐԹ» դասասենյակում յուրաքանչյուր ամիս կազմակերպել տեսադասեր ինֆորմատիկայց, ֆիզիկայից, կենսաբանությունից, մաթեմատիկայից և այլ առարկաներից:<br>• Ապահովել ծնողների ներգրավածությանը դպրոցական կյանքին: | ուստարվա ընթացք | Փոխտնօրեն | |
| | • Կազմակերպել ՎՊՀ-ի ուսանողների արտադրական պրակտիկան դպրոցում: | 11 կիսամյակ մայիս | | |
| | • Ավարտական դասարաններում աշակերտներին և ծնողներին իրազեկել քննական կարգին:<br>• Կազմել նախաքննական խորհրդատվության գրաֆիկ:<br>• Համակարգել քննությունների գրաֆիկը և ընթացքը: | | | |
| | • Կազմել 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների ցուցակը, քննությունների գրաֆիկը (առկ. դեպքում): | ուստարվա ավարտ | Փոխտնօրեն | |